ՅՈՒՐԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐՄԱՏԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Հնդեվրոպաբանները վաղուց են նկատել, որ գոյություն են ունեցել հնդեվրոպական արմատի հնչույթային կազմության սահմանափակումներ, ինչպես, օրինակ՝ բացառվում են պարզ ձայնեղով սկսվող և վերջացող (*bed կամ *ged) կամ շնչեղ ձայնեղով սկսվող ու պարզ խուլով վերջացող և հակառակ հաջորդականությամբ կազմվող արմատները (*bhet կամ *tebh): Այդ թվում նշենք նաև այն փաստը, որ միևնույն ձևաբանական տարրը *e-ից հետո չի կարող կողք կողքի ունենալ երկու ձայնորդներ, այսինքն՝ բացառվում են *teul- կամ *teirp- տիպի ձևերը ևս: Միևնույն ժամանակ, եթե պարզ խուլին նախորդում է *s շփականը, ապա հնարավոր է *stebh տիպը:[1] Բազմաթիվ լեզվաբաններ, անշուշտ, փորձել են նաև բացատրել այդ սահմանափակումների էությունը, ինչը, սակայն, վիճաբանությունների տեղիք է տալիս այն պատճառով, որ եթե դեռ հնդեվրոպական միասնության շրջանին հատկացվող *sed-to>*setto կամ *pettro->*petro- տիպի զարգացումները ինչ-որ չափով բացատրելի են, ապա նույնը չի կարելի ասել *budh-to>*bhuddho անցման մասին: Ասենք նաև, որ թե՛ հիշյալ սահմանափոկումները և թե՛ դրանց պատճառների վերլուծությունը հիմնականում կատարվել է հին հնդկերենի /սանսկրիտի/ տվյալներից ելնելով: Բարթոլոմեի հայտնի օրենքը սահմանում է, որ շնչեղ ձայնեղ→ խուլ հաջորդականությունն արդեն հնդեվրոպական միասնության շրջա-

[1] Мейе А., Введение в сравнительное изучение индоевропейских языков. М.-Л., 1938, с.176-192.

նում փոխվում է ծայնեղ→ շնչեղ ծայնեղ (սնսկ.budh-tá>buddha) հաջորդականության: Նման փոփոխությունը համարվում է առաջընթաց առնմանում ըստ ծայնեղության հատկանիշի, այն դեպքում, երբ հնդեվրոպաբանության մի շարք ներկայացուցիչներ ընդունում են շնչեղ → խուլ և ապա ոչ շնչեղ → ծայնեղ հաջորդական զարգացումը (budh-ta→bud-tha→buddha), այն համարելով շնչեղության հատկանիշի բնական տեղաշարժ: Այսինքն, երբ ի հայտ են գալիս շնչեղ խուլերը, ապա նախկին շնչեղները վերածվում են շնչեղ ծայնեղների:[1] Սակայն երկու դեպքում էլ քննարկվող խնդրի մեջ որոշակի պարզություն չի մտցվում այն պատճառով, որ իրականում ունենք երկու միաժամանակյա գործընթացներ՝ առնմանում և շնչեղության հատկանիշի փոխանցում հաջորդ բաղաձայնին, որը տիպաբանորեն անհավանական է: Խնդիրը բարդանում է նաև այն հանգամանքով, որ վկայված արմատական ձևերը հնդեվրոպական առանձին լեզուներում համարժեք չեն: Ինչպես,օրինակ, համեմատելով հ.ե. *nizdo-ից բխեցվող սնսկ. sīdati ,,նստել,, լատ.sedeo, հսլավ. saditi և հայ.nist (nstim) ձևերը, ենթադրվում է, որ սանսկրիտի և լատիներենի համեմատությամբ հայերեն համապատասխանն ավելի ուշ վիճակ է ներկայացնում: Կարելի էր, անշուշտ, հետևելով Ե.Կուրիլովիչին, հրաժարվել այս խնդրի հե-տագա քննարկումից և բավարարվել այն պնդմամբ, որ Բարթոլոմեի օրենքը վերաբերում է միայն հին հնդկերենի զարգացման ավելի ուշ շրջանին և մյուս հնդեվրոպական լեզուների վրա տարածել չի կարելի: Կարծում ենք, սակայն, որ հին հնդկերենը ևս իր զարգացման ցանկացած փուլում պետք է արտացոլեր նախալեզվի առանձնահատկությունները և, բնականաբար, հիշյալ օրենքը նույնպես կներկայացներ նրան բնորոշ միտումների համապատասխան դրսևորումը:

Ըստ Թ.Գամկրելիձեի և Վ.Իվանովի կողմից առաջ քաշված ,,կատկայինների տեսության,, ավանդական վերականգնմամբ բացառվող *deg տիպը փոխարինվում է կատկայնացված պայթականներից կազմված *t'ek' ձևով և հիշյալ սահմանափակումը բացատրվում է այդ հնչյունների արտասանական յու-

---

[1] Kuryłowicz J., L'apophonie en indoeuropéen. Wrozlaw, 1956. p.379.

ռահատկություններով: Տվյալ դեպքում նկատի է առնվում այն հանգամանքը, որ բնախոսական առումով դրանց արտաբերումը նույն հնչյունաշարքում գործնականում անհնար է, իսկ ավանդական *deg և *ged տիպի սահմանափակումները տիպաբանորեն չեն արդարացվում: Նշված լեզվաբանների կարծիքով, կատկայնացված հնչյունները նույն արմատի կազմում կարող են գոյակցել բոլոր պարզ և շնչեղ խուլ պայթականների հետ:[1] Սա, կարելի է ասել, հիշյալ տեսության ուժեղ կողմն է: Մյուս կողմից, սակայն, նույն մոտեցմամբ կրկին հնարավոր չէ հստակորեն բացատրել *tebh և *bhet տիպի սահմանափակումները: Գամկրելիձեն և Իվանովը ենթադրում են, որ նույն արմատի կազմում ոչ կատկայնացված պայթականները պետք է բնութագրվեն ձայնեղության և խլության միևնույն հատկանիշով: Այսինքն, հնարավոր են միայն *$d^{[h]}ed^{[h]}$ կամ *$t^{[h]}et^{[h]}$ տիպերը, իսկ *$d^{[h]}et^{[h]}$ և *$t^{[h]}ed^{[h]}$ կազմությունների սահմանափակումները նրանք համարում են բաղածայն տարրերից մեկի ըստ ձայնեղության կամ խլության հատկանիշի տարաժամանակյա առնմանության հետևանք: Այդպիսով նրանք սահմանում են հետևյալ զարգացումը. *$b^h ud^h$- + -$t^h o$- →*bud^h- + $t^h o$- → *bud-$t^h o$- հին հնդկերեն buddha-, որը տարնմանության և առնմանության երևույթների քիչ հավանական հերթագայություն է: Ուստի երկրորդ տիպի (*bhet) սահմանափակման հարցում այս տեսությունը կրկին վերջնական պարզություն չի մտցնում, եթե չասենք, որ ավելի է բարդացնում այն: Բացի այդ, եթե հիմք ենք ընդունում հիշյալ մեկնաբանությունը, ապա հնդեվրոպական արմատի բացառվող տիպերի քանակը կա՛մ ավելի շատ է, քան ընդունվում է, կա՛մ էլ պետք է հանգեցնել միայն մեկին, քանի որ թեև ավանդական *ged և *deg սահմանափակումներն իսկապես չեն արդարացվում տիպաբանորեն, սակայն, *$d^{[h]}et^{[h]}$ և *$t^{[h]}ed^{[h]}$ բացառվող կազմություններն էլ չեն հիմնավորվում ծագումնաբանական փաստերով և մնում են որպես սոսկ տիպաբանական վերացարկումներ:

---

[1] Гамкрелидзе Т., Иванов В., Индоевропейский язык и индоевропейцы, т.1, Тбилиси, 1981, с.18-20:

Քանի որ Բարթոլոմեի օրենքը, ըստ էության, վերաբերում է հին հնդկերենի ձևաբանական կառույցներում առկա առաջնալեզվային պայթականների փոխհարաբերությանը, վերոհիշյալ տեսակետի հիմնավորման համար կարևոր նշանակություն ունի t և d բաղաձայններով վերջացող հնդեվրոպական արմատների առանձնահատկությունների ճշգրտումը: Հնդեվրոպաբանության մեջ գոյություն ունի այն տեսակետը, որ եթե հիմքի կազմում հիշյալ հնչյուններին հաջորդում են համապատասխան պայթականով սկսվող ձևույթներ /ինչպես, օրինակ՝ բայական ծագմամբ ածականների, անունների կամ գործող անուն նշանակող *-to-, *-ti-, *-tu-, *-tor- առաջնային ձևույթները/, ապա այստեղ դեռ հնդեվրոպական միասնության շրջանում առաջանում է s աճականը, որը հետագայում կարող է ենթարկվել տարբեր փոփոխությունների: Ասվածը ներկայացվում է *t - t>*tst(>*st) և *d - d[h]>*dzd(*zd) զարգացումների տեսքով, որը պայմանականորեն ձևակերպվում է ø→T/T –T բանաձևով: Այս առումով նշենք, որ հավանական համարելով նման զարգացում միայն խուլերի համար, չի կարելի նույնը ասել ձայնեղների մասին, քանի որ հիշյալ s-ն կարող էր ի հայտ գալ միայն ուժեղ լարված բաղաձայնների փոխազդեցության հետևանքով, իսկ ձայնեղ z-ն անմիջականորեն չպետք է բխեցնել *d - d[h] հաջորդականությունից /եթե ընդունելի ենք դիտում հնդեվրոպական բարբառներում ձայնեղների տարբեր զարգացումների դրույթը/ և ավելի ճիշտ կլիներ այն համարել հիշյալ s-ի հետագա ձայնեղացման արդյունք: Այդ դեպքում ավելի հավանական է թվում *-st->*-sd->-zd[h]- զարգացումը որոշ հետնորդ լեզուներում: Կարծում ենք ասվածը հիմնավորելի է ոչ միայն տիպաբանորեն, այլև համապատասխան ծագումնաբանական փաստերով. հմմտ. հայ. hast, զենդ. basta, հուն. βαϑαύς, գոթ. fastn; հայ. dustr, հին շվեդ. dotter, հին բարձր գերմ. tohtér, հին սլավ. dušti; հայ. azd-r (ast-r-ին զուգահեռ), հին սլավ. stegno ,,ազդր,, , սնսկ. ásthi ,,ոսկոր,, ; հայ. kit՝ (kat՝il), լատ. skateō ,,խփել,, ,լիտվ. skastu ,,թողնել,, ; հայ. ctim ,,ճանկռել,, , հնհնդկ. chiátti, հուն.σχίζω ,,պատռել, ճեղքել,, , ինչպես նաև հայ. ost, գոթ. asts ,,ճյուղ,, , հբգ. ast ,,ճյուղ, ոստ,, , հուն.

ὀζος ,,ճյուղ, ոստ,, /ավանդական վերականգնմամբ *o-zdos-ից/: Հատկապես հատկանշական են *sed-> հայ. nist, հինդկ. nīdā, nīdáh ..հանգստավայր,, / ինչպես նաև sattā-,.իջեցված, նստեցված,,/, գոթ. setum ,,նստել,, , հին իսլանդ. sitja ,,նստել, բնակվել,, , լատ.sedeō, sessun, հին բարձր գերմ. sezzen /նաև nest ,,բույն,,/, հին սլավ. състо, ռուս. гнездо համապատասխանությունները: Սովորաբար նախնական *sed- ,,նստել,, ձևը վերականգնվում է ըստ լատինե-րենի փաստերի: Այդ դեպքում, բնականաբար, հայերենի nist-ը դիտվում է ավելի ուշ ձև, որի զարգացումը, սակայն, դժվար է բացատրվում: ,,Կատկային-ների տեսության,, կողմնակիցները նախկին *sed-ը փոխարինում են *set'-ով, որը կարծես ինչ-որ չափով պարզում է դրությունը, բայց հայ. nist – հինդկ. sattā համապատասխանության էությունը վերջնակա-նապես չի ճշտում: Նշենք նաև, որ երկու ատամնայինների միջև վերոհիշյալ s-ի (š արժեքով իրացմամբ) առաջացման երևույթը կարելի է տեսնել նաև նոստրատիկ փաստերում, ինչը կարող է վճռորոշ նշանակություն ունենալ տվյալ հարցի լուծման մեջ: Այսպես, օրինակ՝ սեմ. *-t-t-r ,,աստվածային աստղ,, , արամ. ʕtr, աքքադ. ištar, եբր. ʿaštöret ~ հ.ե. *(a)ster- ,,աստղ,, , հինդկ. str̥-bhis (հոգն. գործ.), ավեստ. stārəm, խեթ. aštira-, հայ.astł, հուն. 'αστήρ, լատ. stella և այլն:[1] Ամեն դեպքում հայերենի վերոհիշյալ ձևի առավել հնատիպ բնույթը, մեր կարծիքով, ակնհայտ է, իսկ հինդկ. sattā-ի հարցում կարելի է ընդունելի դիտել այն պնդումը, որ այստեղ ունենք *-tst->tt զարգացումը: Նկատի ունենալով նաև, որ ավանդաբար վերականգնվող *nizdo- ,,բույն,, ձևը վկայում է *ni-sed ,,նստել, տեղավորվել,, բայի գոյությունը, որտեղ ni-ն տարածական հարաբե-րություն արտահայտող (ներքև) մասնիկ է, ապա կարելի է ասել, որ միայն հայերենը և գերմանական լեզուներն են պահպանել այդ նախնական արմատը:

---

[1] Möller H., Vergleichendes indogermanisch – semitisches Wörterbuch, Göttingen, 1911. S.44.

Այսպիսով, եթե ելնում ենք ,,կատկայինների տեսությունից,, , ապա ըստ վերը կատարված վերլուծությունների պետք է ենթադրել, որ ավանդական մեկնաբանությամբ բացառվող արմատական ձևերը մի դեպքում հիմնավորվում են նույն կազմության մեջ կատկայնացված հնչույթների անհամատեղելիությամբ, իսկ մյուսում (*b[h]et կամ *teb[h], որտեղ շնչեղությունը դիտվում է որպես հավելյալ հատկանիշ) գործ ունենք ավելի հին ձևերի հետ, որոնք իրականում այդպիսիք չեն: Մեր կարծիքով, քննարկվող հարցում, որոշ վերապահումներով անշուշտ, ավելի իրական է թվում Ե.Կուրիլովիչի վերոհիշյալ մեկնաբանությունը, եթե հիմք ենք ընդունում նաև Է.Բենվենիստի այն տեսակետը, որ CVC կազմություններում անհամատեղելի են տեղայնացման նույն հատկանիշներով բնութագրվող բաղաձայնները:[1] Այս ամենի հաշվառումով կարող ենք եզրակացնել, որ CVC տիպի համար ընդունելի է միայն մեկ սահմանափակում. նույն կազմության մեջ անհամատեղելի են լարվածության քանակական կամ որակական միևնույն հատկանիշներով բնութագրվող հնչյունները: Հարկ է նշել, որ արդի լեզվաբանության մեջ հնչյունների լարվածությունը բնութագրվում է արտասանական օրգանների մկանային լարվածության /քանակական կողմ/ և արտաբերման ուժի /որակական կողմ/ փոխհարաբերությամբ, որոնք միմյանց նկատմամբ գտնվում են հակադարձ համեմատական կապի մեջ:[2]

Այլ մոտեցմամբ մոտավորապես նման կարծիք է հայտնում նաև Օ.Շիրոկովը: Ընդունելով, որ հնդեվրոպական շեշտը եղել է բարձրության /երաժշտական/ և քննելով հայերենի համապատասխան փաստերը, նա գտնում է, որ բացառվող արմատական կազմությունների պատճառը շեշտահաջորդ բաղաձայնի առավել լարված արտասանությունն է, որի հետևանքով նախաշեշտ լարված բաղաձայնը վերածվում է թույլ լարվածի: Որպես ասվածի հիմնավորում լեզվաբանը տեսնում է Վեռների հայտնի օրենքը և եզրակացնում, որ հին

---

[1] Бенвенист Э., Индоевропейское именное словообразование, М., 1955, с. 47.

[2] Գաբրիելյան Յու., Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, Եր., 2001, էջ 83:

հնդկերենի datta-, jukta- ձևերն ավելի հին են, քան dagdhá-, labdha և նման այլ կառույցները, որոնք հին հնդկերենի ինքնուրույն զարգացման արդյունք են: Ինչ վերաբերում է հայերենի պարզ և շնչեղ խուլերի հակադրությանը /որպես լարված և ոչ լարված/, Շիրոկովը կարծում է, որ այն բնորոշ է եղել հնագույն հայերենին, որոնք վանկ-ձևույթի կազմում կարող էին ունենալ տար-բեր իրացումներ: Ընդհանուր առմամբ նա հաստատում է նաև ձայնեղների զարգացման տիպաբանական հնարավորությունները՝ լարվածների թուլաց-մամբ կամ ոչ լարվածների ուժեղացմամբ:[1] Այս տեսակետի վիճելի կողմն այն է, որ հաճախ նույն լեզվում ունենում ենք թե՛ ուժգնության և թե՛ բարձրության շեշտ՝ դրանցից որևէ մեկի գերակայությամբ: Նկատի ունենալով նաև, որ լեզվի զարգացման ընթացքում դրանց հարաբերակցությունը կարող է փոխվել, ապա դժվար է միանշանակ կերպով պնդել, որ հնդեվրոպական վիճակին բնորոշ է եղել շեշտի այս կամ այն տիպը: Այս առումով նշենք, որ ըստ Հ.Հիրտի, վաղ հնդեվրոպական շրջանում գերիշխել է ուժգնության շեշտը, իսկ ավելի ուշ՝ բարձրության: Հետևաբար կարող ենք ասել, որ հնդեվրոպական արմատի կազ-մության վերոհիշյալ սահմանափակումների խնդիրը կարելի է բացատրել միայն ձայնեղ /պարզ և շնչեղ/ բաղաձայնների հետնորդ լեզուներում տարբեր ժամանակագրական զարգացումներով: Այսինքն՝ հնդեվրոպական նախալեզ-վին բնորոշ է եղել արմատի կազմության միայն մեկ սահմանափակում, որը ներկայացվեց վերը: Ընդ որում այստեղ ելնում ենք հնդեվրոպաբանության մեջ գոյություն ունեցող աթեմատիկ հիմքերի նախնականության, ինչպես նաև այն դրույթից, որ արմատի ծավալումը հնդեվրոպական տարբեր լեզուներում տեղի է ունեցել տարբեր կերպ, թեև ընդհանուր միտումների հիման վրա:[2]

---

[1] Широков О. С., Общеиндоевропейский и армянский консонантизм, Միջազգային հայերենագիտական գիտաժողովի զեկուցումներ, Եր., 1984, էջ 123-131:

[2] Meier-Brügger M., Mayrhofer M., Indogermanische Sprachwissenschaft, Berlin- New York, 2000, S. 18-19.